*Տանիքների նորոգման շինարարական աշխատանքների*
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/07»**

ք. Կապան «15» ապրիլ 2026 թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱՐՏԼԱՅՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ և <<ՍԻՍԻԱՆԻ(ՆՈՐ ԲԱԿ) ՆՈՐՈԳՇԻՆ>> ԲԲԸ ՀԳ-ն, ի դեմս <<ԱՐՏԼԱՅՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Կարեն Սահակյանի, որը գործում է Համատեղ գործունեության պայմանագրի և ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված տանիքների նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/07» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն օրացուցային գրաֆիկի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյթյունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնոթյունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի ( էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման

(շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և

պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 34314000 (երեսունչորս միլիոն երեք հարյուր տասնչորս հազար) ՀՀ դրամ, որից 5719000 (հինգ միլիոն յոթ հարյուր տասնինը հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ 19194000 ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժին՝ 10080000 ՀՀ դրամ,

3-րդ չափաբաժին՝ 5040000 ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու

դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1 | նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների խախտում | 10000 ՀՀ դրամ |
| 2 | շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման նորմերի խախտում | 10000 ՀՀ դրամ |
| 3 | գ/կահավորման նորմերի խախտում | 10000 ՀՀ դրամ |
| 4 | տեխնիկական անվտանգության նորմերի խախտում | 10000 ՀՀ դրամ |
| 5 | սանիտարահիգիենիկ նորմերի խախտում | 10000 ՀՀ դրամ |
| 6 | բնապահպանական(այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերի խախտում | 10000 ՀՀ դրամ |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով,

որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Արտլայն Քոնսթրաքշն» ՍՊԸ և «ՍԻՍԻԱՆԻ(ՆՈՐ ԲԱԿ) ՆՈՐՈԳՇԻՆ» ԲԲԸ ՀԳ

| | | |
|---|---|---|
| Կապանի համայնքապետարան | «Արտլայն Քոնսթրաքշն» ՍՊԸ | «Սիսիանի(Նոր Բակ) Նորոգշին» ԲԲ |
| ք. Կապան, Չարենցի 1 | Գորիս,Արցախյան խճուղի 46 | Սյունիք, Սիսիան, Շիրակի, 13 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Արդշինբանկ ԲԲԸ Գորիս մ/ճ | Ակբաբանկ ԲԲԸ Սիսիան մ/ճ |
| ՀՀ 900312000194 | Հ/Հ 2475705446320000 | Հ/Հ 220333330359000 |
| ՀՎՀՀ 09426088 | ՀՎՀՀ 09222905 | ՀՎՀՀ 09806674 |

--------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

Կ.Սահակյան---------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

*Հավելված թիվ 1*
*« 15 » ապրիլ 2026թ. կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/07» ծածկագրով պայմանագրի*

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ***
*«Տանիքների նորոգման շինարարական աշխատանքների կատարման»*

1-ին չափաբաժին
Սյունիք բնակավայր, Ներքին թաղամաս 8

| N | Հիմնավորում | Աշխատանքի անվանումը | Չափման միավոր | Քանակը | Մեկ միավորի ընդհանուր արժեքը | Ընդհանուր արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | **Մետաղական հիմնակմախք** | | | | |
| 1 | 1--1552 | Հիմքերի փորում էքսկավատորով 4-րդ կարգի գրունտներում 0,5խմ շերեփի տարողությամբ կողալիցքում | խմ | 8,30 | 0,93 | 7,75 |
| 2 | 1-962 Գ=1,2 | Խրամուղու լրամշակում ձեռքով 4-րդ կարգի գրունտներում | խմ | 0,8 | 7,46 | 5,97 |
| 3 | 8--11 | Խճի նախաշերտի կառուցում 10,0 սմ հաստությամբ | խմ | 1,30 | 9,72 | 12,63 |
| 4 | 6--20 | Հիմքերի կառուցում Բ15 դասի բետոնով | խմ | 5,30 | 57,83 | 306,51 |
| 5 | 6--85 | Վրադիր էլեմենտների տեղադրում | տ | 0,0305 | 44,94 | 1,37 |
| 6 | ինֆ. | Թիթեղ 150x150x5 | քմ | 0,293 | 22,65 | 6,62 |
| 7 | ինֆ. | Ամրան Փ14 A III | կգ | 18,90 | 0,45 | 8,55 |
| 8 | 9--51 | Մետաղական սյուների տեղադրում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից | տ | 0,4814 | 58,71 | 28,26 |
| 9 | ինֆ. | խողովակ N 80 x 80 x3,0 պրոֆիլի | մ | 65,0 | 3,56 | 231,51 |
| 10 | 9--94 | Մետաղական հեծանների մոնտաժում | տ | 0,5525 | 94,02 | 51,95 |
| 11 | ինֆ. | խողովակ N 80 x 80 x3,0 պրոֆիլի | մ | 74,6 | 3,56 | 265,70 |
| 12 | 15-614 | Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ | քմ | 105,60 | 1,59 | 167,59 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13 | 23-46 վեր | Անցքերի բացում քարե պատերում Φ16մմ տրամագծով 20սմ խորությամբ կապերի համար | հատ | 13,0 | 0,41 | 5,36 |
| 14 | 6--82 | Խարիսխների տեղադրում բացված անցքերում ամրան Φ 14 A500C | կգ | 3,90 | 0,59 | 2,31 |
| 15 | 46-71 | Անցքերի խցափակում պոլիմեր ցեմենտի շաղախով | խմ | 0,01 | 171,18 | 1,71 |
| | | **Ընդամենը** | | | 0,00 | **1103,78** |
| | | **Տանիք և կցակառույցներ** | | | 0,00 | 0,00 |
| 1 | 46-98 | Գոյություն ունեցող ասբոհերձաքարե տանիքի քանդում | քմ | 1024,0 | 0,31 | 322,37 |
| 2 | 10--70 գ=0.8 | Ոչ պիտանի փայտե էլեմենտների քանդում | խմ | 10,60 | 39,03 | 413,68 |
| 3 | 10--70 | Նոր փայտե կոնստրուկցիաների կառուցում (տապաստ,կանգնակ,հենագերան, թեքան,ծպեղնատոք) | խմ | 22,70 | 266,01 | 6038,32 |
| 4 | 9--24 | Տանիքի ծածկույթի կառուցում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ. (КП 35--0,5 մմ ) կավարամածով | քմ | 1010,0 | 6,04 | 6101,20 |
| 5 | Ինֆ | Չորսւ կավարամածի | խմ | 5,40 | 200,65 | 1083,51 |
| 6 | 12-280 | Տանիքի գագաթագծի, թիթեղապատում ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ. 75 գծմ | քմ | 22,5 | 5,27 | 118,54 |
| 7 | 7-767 | Մետաղական էլեմենտների տեղադրում տապաստների խարսխման համար Φ14 Ac 1 | կգ | 3,90 | 0,45 | 1,76 |
| 8 | 12-278 | Տանիքի ջրորդանների կառուցում ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ.800մմ | գծմ | 75,0 | 10,91 | 818,53 |
| 9 | 12-280 | Գոգնոցի կառուցում ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ. | քմ | 90,0 | 5,34 | 480,71 |
| 10 | 8-195 | Ջրորդան խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղով Φ-150 մմ | մ | 40,0 | 4,60 | 183,99 |
| 11 | ինֆ | Ջրհորդան ձագարներ | հատ | 8,0 | 2,65 | 21,19 |
| 12 | ինֆ | Ջրհորդան արմունկներ | հատ | 8,0 | 1,59 | 12,71 |
| 13 | 10-71 | Տանիքի ձեղնահարկի լուսամուտների տեղադրում | հատ | 4,00 | 45,79 | 183,16 |
| 14 | 10--201 | Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն | խմ | 16,10 | 11,08 | 178,35 |
| 15 | 10--203 | Փայտե կավարամածի հրապաշտպանություն | 100 քմ | 10,1 | 35,96 | 363,16 |
| | | **Ընդամենը** | | | 0,00 | **16321,20** |
| | | **Տանիքի մետաղական աստիճան** | | | 0,00 | |
| 1 | 23-46 վեր | Անցքերի բացում քարե պատերում Φ20մմ տրամագծով 20սմ խորությամբ տանիք բարձրացող մետաղական աստիճանի | հատ | 8,0 | 0,41 | 3,30 |
| 2 | 6--82 | Ցցերի տեղադրում բացված անցքերում ամրան Φ 18 A500C | կգ | 2,8 | 0,51 | 1,43 |
| 3 | 46-71 | Անցքերի խցափակում պոլիմեր ցեմենտի շաղախով | խմ | 0,01 | 171,18 | 1,71 |
| 4 | 9-46 | Տանիք բարձրացող մետաղական աստիճանի մոնտաժում | տն | 0,0236 | 175,92 | 4,14 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | Ինֆ | Գոտի ( խողովակ 40x40x2մմ) | մ | 7,20 | 0,96 | 6,90 |
| 6 | Ինֆ | Աստիճան ( խողովակ 30x30x2մմ) | մ | 3,00 | 0,79 | 2,38 |
| 7 | 15-614 | Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու շերտ | քմ | 1,80 | 1,59 | 2,86 |
| 8 | 27-77 վեր | Տանիքում գոյություն ունեցող շին աղբի մաքրում | տն | 18,40 | 2,60 | 47,75 |
| 9 | 23-229 վեր. | Շին աղբի բարձում ավտոմեքենաներին ձեռքով | տն | 18,40 | 1,15 | 21,22 |
| 10 | C310-10 | Շին աղբի տեղափոխում 5կմ հեռավորության վրա | տն | 18,40 | 2,60 | 47,92 |
| | | **Ընդամենը** | | | | **139,62** |
| | | **Ամբողջը** | | | | **17564,60** |
| | | **ԱԱՀ 20%** | | | | 3512,92 |
| | | **Ընդամենը** | | | | **21077,521** |

2-րդ չափաբաժին
Սյունիք բնակավայր, Վերին թաղամաս 1

**հազ.դրամ**

| N | Հիմնավորում | Աշխատանքի անվանումը | Չափման միավոր | Քանակը | Մեկ միավորի ընդհանուր արժեքը | Ընդհանուր արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | **Մետաղական հիմնակմախք** | | | | |
| 1 | 1--1552 | Հիմքերի փորում էքսկավատորով 4-րդ կարգի գրունտներում 0,5խմ շերեփի տարողությամբ կողալիցքում | խմ | 1,40 | 0,93 | 1,31 |
| 2 | 1-962 Գ=1,2 | Խրամուղու լրամշակում ձեռքով 4-րդ կարգի գրունտներում | խմ | 0,2 | 7,46 | 1,49 |
| 3 | 8--11 | Խճի նախաշերտի կառուցում 10,0 սմ հաստությամբ | խմ | 0,40 | 9,72 | 3,89 |
| 4 | 6--20 | Հիմքերի կառուցում B15 դասի բետոնով | խմ | 1,40 | 57,83 | 80,97 |
| 5 | 6--85 | Վրադիր էլեմենտների տեղադրում | տ | 0,0093 | 44,94 | 0,42 |
| 6 | ինֆ. | Թիթեղ 150x150x5 | քմ | 0,09 | 22,65 | 2,04 |
| 7 | ինֆ. | Ամրան Ф14 A III | կգ | 5,80 | 0,45 | 2,62 |
| 8 | 9--51 | Մետաղական սյուների տեղադրում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից | տ | 0,0948 | 58,71 | 5,57 |
| 9 | ինֆ. | խողովակ N 80 x 80 x3,0 պրոֆիլի | մ | 12,8 | 3,56 | 45,59 |
| 10 | 9--94 | Մետաղական հեծանների մոնտաժում | տ | 0,1407 | 94,02 | 13,23 |
| 11 | ինֆ. | խողովակ N 80 x 80 x3,0 պրոֆիլի | մ | 19,0 | 3,56 | 67,67 |
| 12 | 23-46 վեր | Անցքերի բացում քարե պատերում Ф16մմ տրամագծով 20սմ խորությամբ միաձույլ ե/բ գոտու կառուցման համար | հատ | 4,0 | 0,41 | 1,65 |
| 13 | 6--82 | Խարիսխների տեղադրում բացված անցքերում ամրան Ф 14 A500C | կգ | 1,20 | 0,59 | 0,71 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 14 | 46-71 | Անցքերի խցափակում պոլիմեր ցեմենտի շաղախով | խմ | 0,01 | 171,18 | 1,71 |
| 15 | 15-614 | Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ | քմ | 10,20 | 1,59 | 16,19 |
| | | **Ընդամենը** | | | 0,00 | **245,04** |
| | | **Տանիք և կցակառույցներ** | | | 0,00 | 0,00 |
| 1 | 46-98 | Գոյություն ունեցող ասբոհերձաքարե տանիքի քանդում | քմ | 403,1 | 0,31 | 126,90 |
| 2 | 10--70 գ=0.8 | Ոչ պիտանի փայտե էլեմենտների քանդում | խմ | 12,10 | 39,03 | 472,22 |
| 3 | 23-46 վեր | Անցքերի բացում քարե պատերում Φ16մմ տրամագծով 20սմ խորությամբ միաձույլ ե/բ գոտու կառուցման համար | հատ | 173,0 | 0,41 | 71,36 |
| 4 | 6--82 | Խարիսխների տեղադրում բացված անցքերում ամրան Φ 14 A500C | տն | 0,0628 | 139,21 | 8,74 |
| 5 | 46-71 | Անցքերի խցափակում պոլիմեր ցեմենտի շաղախով | խմ | 0,10 | 171,18 | 17,12 |
| 6 | 6-168 | Մոնոլիտ ե/բետոնե գոտու իրականացում տանիքում B 20 դասի բետոնով | խմ | 12,5 | 81,44 | 1018,06 |
| 7 | ինֆ. | Ամրան Φ8 Ac 1 | տն | 0,2752 | 370,83 | 102,05 |
| 8 | ինֆ. | Ամրան Φ16 A500C | տն | 0,6573 | 452,29 | 297,29 |
| 9 | 10--70 | Նոր փայտե կոնստրուկցիաների կառուցում (տապաստ,կանգնակ,հենագերան, թեքան,ծպեղնատոք) | խմ | 10,40 | 266,01 | 2766,46 |
| 10 | 9--24 | Տանիքի ծածկույթի կառուցում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ. (КП-35--0,5 մմ ) կավարամածով | քմ | 362,1 | 6,04 | 2187,37 |
| 11 | Ինֆ | Չորսւ կավարամածի | խմ | 1,93 | 200,65 | 387,25 |
| 12 | 12-280 | Տանիքի գագաթագծի, թիթեղապատում ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ. 48 գծմ | քմ | 14,4 | 9,70 | 139,70 |
| 13 | 7-767 | Մետաղական էլեմենտների տեղադրում տապաստների խարսխման համար Φ6 Ac 1 | կգ | 7,00 | 0,37 | 2,60 |
| 14 | 12-278 | Տանիքի ջրորդանների կառուցում ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ.800մմ | գծմ | 84,4 | 7,90 | 667,17 |
| 15 | 12-280 | Գոգնոցի կառուցում ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ. | քմ | 54,9 | 5,34 | 293,24 |
| 16 | 8-195 | Ջրորդան խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղից Φ-150 մմ | մ | 18,0 | 4,60 | 82,80 |
| 17 | ինֆ | Ջրհորդան ձագարներ | հատ | 6,0 | 2,65 | 15,90 |
| 18 | ինֆ | Ջրհորդան արմունկներ | հատ | 6,0 | 1,59 | 9,54 |
| 19 | 10-71 | Տանիքի ձեղնահարկի լուսամուտների տեղադրում | հատ | 2,0 | 45,79 | 91,58 |
| 20 | 10--201 | Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն նոր տեղադրված և գոյություն ունեցող | խմ | 9,08 | 11,08 | 100,58 |
| 21 | 10--203 | Փայտե կավարամածի հրապաշտպանություն նոր տեղադրված և գոյություն ունեցող | 100 քմ | 3,621 | 35,96 | 130,20 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | **Ընդամենը** | | | 0,00 | **8988,12** |
| | | **Տանիքի մետաղական աստիճան** | | | 0,00 | 0,00 |
| 1 | 23-46 վեր | Անցքերի բացում քարե պատերում Ф20մմ տրամագծով 20սմ խորությամբ տանիք բարձրացող մետաղական աստիճանի | հատ | 8,0 | 0,41 | 3,30 |
| 2 | 6--82 | Ցցերի տեղադրում բացված անցքերում ամրան Ф 18 A500C | կգ | 2,8 | 0,59 | 1,65 |
| 3 | 46-71 | Անցքերի խցափակում պոլիմեր ցեմենտի շաղախով | խմ | 0,01 | 171,18 | 1,71 |
| 4 | 9-46 | Տանիք բարձրացող մետաղական աստիճանի մոնտաժում | տն | 0,0235 | 175,92 | 4,14 |
| 5 | Ինֆ | Գոտի ( խողովակ 40x40x2մմ) | մ | 7,20 | 0,96 | 6,90 |
| 6 | Ինֆ | Աստիճան ( խողովակ 30x30x2մմ) | մ | 3,00 | 0,79 | 2,38 |
| 7 | 15-614 | Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու շերտ | քմ | 1,80 | 1,59 | 2,86 |
| 8 | 27-77 վեր | Տանիքում գոյություն ունեցող շին աղբի մաքրում | տն | 8,40 | 2,60 | 21,80 |
| 9 | 23-229 վեր. | Շին աղբի բարձում ավտոմեքենաներին ձեռքով | տն | 12,66 | 1,15 | 14,60 |
| 10 | C310-5 | Շին աղբի տեղափոխում 5կմ հեռավորության վրա | տն | 12,66 | 2,60 | 32,97 |
| | | **Ընդամենը** | | | | **92,32** |
| | | **Ամբողջը** | | | | **9325,49** |
| | | **ԱԱՀ 20%** | | | | 1865,10 |
| | | **Ընդամենը** | | | | **11190,58** |

3-րդ չափաբաժին
Սյունիք բնակավայր,Վերին թաղամաս 13

**հազ.դրամ**

| N | Հիմնավորում | Աշխատանքի անվանումը | Չափման միավոր | Քանակը | Մեկ միավորի ընդհանուր արժեքը | Ընդհանուր արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | **Տանիք և կցակառույցներ** | | | | |
| 1 | 46-98 | Գոյություն ունեցող ասբոհերձաքարե տանիքի քանդում | քմ | 206,3 | 0,31 | 64,95 |
| 2 | 10--70 գ=0.8 | Ոչ պիտանի փայտե էլեմենտների քանդում | խմ | 5,60 | 39,03 | 218,55 |
| 3 | 23-46 վեր | Անցքերի բացում քարե պատերում Ф16մմ տրամագծով 20սմ խորությամբ միաձույլ ե/բ գոտու կառուցման համար | հատ | 106,0 | 0,41 | 43,73 |
| 4 | 6--82 | Խարիսխների տեղադրում բացված անցքերում ամրան Ф 14 A500C | տն | 0,0385 | 591,05 | 22,76 |
| 5 | 46-71 | Անցքերի խցափակում պոլիմեր ցեմենտի շաղախով | խմ | 0,10 | 171,18 | 17,12 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6 | 6-168 | Մոնոլիտ ե/բետոնե գոտու իրականացում տանիքում B 20 դասի բետոնով | խմ | 7,6 | 81,44 | 618,98 |
| 7 | ինֆ. | Ամրան Φ8 Ac 1 | տն | 0,1683 | 370,83 | 62,41 |
| 8 | ինֆ. | Ամրան Φ16 A500C | տն | 0,4020 | 452,29 | 181,82 |
| 9 | 10--70 | Նոր փայտե կոնստրուկցիաների կառուցում (տապաստ,կանգնակ,հենագերան, թեքան,ծպեղնատոտ) | խմ | 3,06 | 266,01 | 813,98 |
| 10 | 9--24 | Տանիքի ծածկույթի կառուցում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ. (КП-35--0,5 մմ ) կավարամածով | քմ | 178,5 | 6,04 | 1078,28 |
| 11 | Ինֆ | Չորսւ կավարամածի | խմ | 0,62 | 200,65 | 124,40 |
| 12 | 12-280 | Տանիքի գագաթագծի, թիթեղապատում ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ. 48 գծմ | քմ | 14,4 | 5,34 | 76,91 |
| 13 | Ինֆ | Տախտակամած | խմ | 2,12 | 200,65 | 425,38 |
| 14 | 7-767 | Մետաղական էլեմենտների տեղադրում տապաստների խարսխման համար Φ6 Ac 1 | կգ | 5,60 | 0,37 | 2,08 |
| 16 | 12-278 | Տանիքի ջրորդանների կառուցում ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ.800մմ | գծմ | 54,0 | 7,90 | 426,86 |
| 17 | 12-280 | Գոգնոցի կառուցում ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ. | քմ | 42,6 | 5,34 | 227,54 |
| 18 | 8-195 | Ջրորդան խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղով Φ-150 մմ | մ | 24,0 | 4,60 | 110,40 |
| 19 | ինֆ | Ջրհորդան ծագարներ | հատ | 4,0 | 2,65 | 10,60 |
| 20 | ինֆ | Ջրհորդան արմունկներ | հատ | 4,0 | 1,59 | 6,36 |
| 21 | 10-71 | Տանիքի ձեղնահարկի լուսամուտների տեղադրում | հատ | 2,00 | 45,79 | 91,58 |
| 22 | 10--201 | Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն նոր տեղադրված և գոյություն ունեցող | խմ | 4,98 | 11,08 | 55,17 |
| 23 | 10--203 | Փայտե կավարամածի հրապաշտպանություն նոր տեղադրված և գոյություն ունեցող | 100 քմ | 1,785 | 35,96 | 64,18 |
| | | **Օդափոխության հորան 2 հատ** | | | 0,00 | 0,00 |
| 24 | 9--88 | Մետաղական էլեմենտների տեղադրում օդափոխիչ հորանների վրա 2հատ | տն | 0,017 | 98,87 | 1,68 |
| 25 | Ինֆ | Երիզ 40 x4 | մ | 5,70 | 0,53 | 3,02 |
| 26 | Ինֆ | Խողովակ 20x20 x1.5 | մ | 5,70 | 0,49 | 2,79 |
| 27 | Ինֆ | Ձող Φ14AIII | կգ | 4,40 | 0,45 | 1,99 |
| 28 | 12-280 | Օդափոխիչ հորանների ծածկի կառուցում ցինկապատ թիթեղով 0,55մմ հաստ. | քմ | 1,2 | 5,35 | 6,42 |
| 29 | Ինֆ | Դյուբել մեխ | հատ | 24,0 | 0,08 | 1,91 |
| 30 | 12-280 | Կոյուղու կանգնակների թասակի կառուցում ցինկապատ թիթեղով 0,55մմ հաստ. 4 հատ | քմ | 1,80 | 5,37 | 9,67 |
| | | **Տանիքի մետաղական աստիճան** | | | 0,00 | 0,00 |
| 31 | 23-46 վեր | Անցքերի բացում քարե պատերում Φ20մմ տրամագծով 20սմ խորությամբ տանիք բարձրացող մետաղական աստիճանի | հատ | 8,0 | 0,41 | 3,30 |
| 32 | 6--82 | Ցցերի տեղադրում բացված անցքերում ամրան Φ 18A500C | կգ | 2,80 | 1,84 | 5,15 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 33 | 46-71 | Անցքերի խցափակում պոլիմեր ցեմենտի շաղախով | խմ | 0,01 | 171,18 | 1,71 |
| 34 | 9-46 | Տանիք բարձրացող մետաղական աստիճանի մոնտաժում | տն | 0,0349 | 175,92 | 6,14 |
| 35 | Ինֆ | Գոտի ( խողովակ 40x40x2մմ) | մ | 10,60 | 0,96 | 10,16 |
| 36 | Ինֆ | Աստիճան ( խողովակ 30x30x2մմ) | մ | 4,50 | 0,79 | 3,58 |
| 37 | 15-614 | Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու շերտ | քմ | 2,20 | 1,59 | 3,49 |
| 38 | 27-77 վեր | Տանիքում գոյություն ունեցող շին աղբի մաքրում | տն | 12,0 | 2,60 | 31,14 |
| 39 | 23-229 վեր. | Շին աղբի բարձում ավտոմեքենաներին ձեռքով | տն | 12,0 | 1,15 | 13,84 |
| 40 | C310-10 | Շին աղբի տեղափոխում 5կմ հեռավորության վրա | տն | 12,0 | 2,60 | 31,25 |
| | | **Ընդամենը** | | | | 4881,25 |
| | | **ԱԱՀ 20%** | | | | 976,25 |
| | | **Ընդամենը** | | | | **5857,50** |

* Կապալառուն աշխատանքները կատարում է Սյունիք բնակավայրում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Կապանի համայնքապետարան
ք. Կապան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312000194
ՀՎՀՀ 09426088

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Արտլայն Քոնսթրաքշն» ՍՊԸ
Ք.Գորիս, Արցախյան խճուղի 46
Արդշինբանկ ԲԲԸ Գորիս մ/ճ
ՀՀ 2475705446320000
ՀՎՀՀ 09222905

Կ. Սահակյան ------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**Հավելված 1.1**
*« 15 » ապրիլ 2026թ.  կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/07»  ծածկագրով պայմանագրի*

**ՀԱՎԱՍՏՈՒՄ**
**իրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին**

<<ԱՐՏԼԱՅՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ և <<ՍԻՍԻԱՆԻ(ՆՈՐ ԲԱԿ) ՆՈՐՈԳՇԻՆ>> ԲԲԸ ՀԳ -ն հավաստում է, որ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/07» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, պարտավորվում է նույն ծածկագրով գնանշման հարցման շրջանակում կնքվող պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Կապանի համայնքապետարան
ք. Կապան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312000194
ՀՎՀՀ 09426088

------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Արտլայն Քոնսթրաքշն» ՍՊԸ
Ք.Գորիս, Արցախյան խճուղի 46
Արդշինբանկ ԲԲԸ Գորիս մ/ճ
ՀՀ 2475705446320000
ՀՎՀՀ 09222905

Կ.Սահակյան ------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*« 15 » ապրիլ 2026թ. կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/07» ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ***
« Տանիքների նորոգման շինարարական աշխատանքների կատարման»

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Տանիքի վերանորոգման աշխատանքներ /Սյունիք բնակավայր, Ներքին թաղամաս 8/ | *պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը* | 01 սեպտեմբեր 2026թ. |
| 2 | Տանիքի վերանորոգման աշխատանքներ /Սյունիք բնակավայր, Վերին թաղամաս 1/ | *պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը* | 01 սեպտեմբեր 2026թ. |
| 3 | Տանիքի վերանորոգման աշխատանքներ /Սյունիք բնակավայր,Վերին թաղամաս 13/ | *պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը* | 01 սեպտեմբեր 2026թ. |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | *պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը* | 01 սեպտեմբեր 2026թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Կապանի համայնքապետարան
ք. Կապան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312000194
ՀՎՀՀ 09426088

_______________________________
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Արտլայն Քոնսթրաքշն» ՍՊԸ
Ք.Գորիս, Արցախյան խճուղի 46
Արդշինբանկ ԲԲԸ Գորիս մ/ճ
ՀՀ 2475705446320000
ՀՎՀՀ 09222905

Կ.Սահակյան____________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 15 » ապրիլ 2026թ. կնքված
«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/07» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45261124/1 | Տանիքի վերանորոգման աշխատանքներ /Սյունիք բնակավայր, Ներքին թաղամաս 8/ | | | | | 9597000 | 19194000 | 19194000 | 19194000 | 19194000 | 19194000 | 19194000 | 19194000 | 19194000 |
| 2 | 45261124/2 | Տանիքի վերանորոգման աշխատանքներ /Սյունիք բնակավայր, Վերին թաղամաս 1/ | | | | | 5400000 | 10080000 | 10080000 | 10080000 | 10080000 | 10080000 | 10080000 | 10080000 | 10080000 |
| 3 | 45261124/3 | Տանիքի վերանորոգման աշխատանքներ /Սյունիք բնակավայր,Վերին թաղամաս 13/ | | | | | 2520000 | 5040000 | 5040000 | 5040000 | 5040000 | 5040000 | 5040000 | 5040000 | 5040000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Կապանի համայնքապետարան
ք. Կապան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312000194
ՀՎՀՀ 09426088

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Արտլայն Քոնսթրաքշն» ՍՊԸ
Ք.Գորիս, Արցախյան խճուղի 46
Արդշինբանկ ԲԲԸ Գորիս մ/ճ
ՀՀ 2475705446320000
ՀՎՀՀ 09222905

Կ.Սահակյան ------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*« 15 » ապրիլ 2026թ. կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱԾՁԲ-26/07» ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ___________________ | ___________________ |
| ___________________ | ___________________ |
| գտնվելու վայրը ___________ | գտնվելու վայրը ___________ |
| հհ ___________ | հհ___________ |
| հվհհ ___________ | հվհհ___________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ___________________ | ___________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ___________________ | ___________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*« 15 » ապրիլ 2026թ. կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/07» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և __________________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ____________________________-ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________
ազգանուն, անուն
_______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն
_______________________
ստորագրություն

Հավելված N 5
« 15 » ապրիլ 2026թ. կնքված
«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/07» ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________________________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ______________________________-ի և _________________________-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կապալառուի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և
______________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կապալառուի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

________________________________________________ _______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.